

## ԱՌԱՆՑ ԴԱԻԱՆԱՆՔԻ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻց ՎԵպ ՀՅՈՒՐԻԿ ՍԵՆԿԱԿԻՄԻ

### ՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ

(Եարո՞ւմակութիւն<sup>1)</sup>)

28 ապրիլի.

Կրոսիցիու նամակները այն աստիճանն ճնշող ազդեցութիւն գործեցին ինձ վրայ, որ ստացած տպաւորութիւնս մինչև այժմ շարունակում է: Իրաւ է Անելկայի դէմ անհիմն զայրոյթս անցնում է.—որքան աւելի եմ զգում, որ անիրաւացի էր նրա հետ այն աստիճան կոպիտ վարւելս, այնքան աւելի եմ զզջում արածիս համար և այնքան աւելի քննչութեամբ եմ մտածում նրա մասին: Բայց միւս կողմից քանի գնում՝ աւելի ու աւելի պարզ եմ տեսնում, թէ ինչպէս անողոք կերպով միաւորում է նրանց նոյն իսկ փակտերի ոյժը: Երէկւանից այդ մտածմունքի միրաններումն եմ և այդ պատճառով այսօր չը գնացի Պլշով: Այնուեղ պէտք է միշտ ուշըս վրաս պահեմ, պէտք է հանգիստ լինեմ կամ հանգիստ ձեւանամ: այժմ այդ իմ ոյժիցը վեր է: Խնչ որ կայ—չը կայ մէջս՝ մի'ոք, զգացմունք, տպաւորութիւն, —բոլորը խառնւել է իրար ու ուորի կանգնել կատարւած իրողութեան դէմ: Չը գիտեմ կարմղ է

1) Տես «Մուբե» 1893 թ. հան 1, 2, 3, 4, 5, 6, 7—8, 10:

արդեզք լինել աւելի դառն դրութիւն քան այն, երբ մարդ չի հաշտում մի որ և է բանի հետ, բողոքում է իւր ուղեղի ու սրտի իւրաքանչիւր մասնիկով և միևնոցն ժամանակը կատարւած իրողութեան առաջ իրան անզօր է զգում: Այն էլ եմ լաւ հասկանում, որ այդ միայն ռակիզն է երկանց: Ուինչ չեմ կարող անել ոչինչ: Մարդու է գնացել, պանի կրոսմցկա է դարձել պատկանում է կրոմիցկուն և միշտ պատկանելու է նրան, իսկ ես, որ չեմ կարող այդ բանի հետ հաշտուել որովհետեւ եթէ հաշտուեմ՝ չեմ կարող ապրել—պէտք է հաշտեմ: Նոյնչափ հետեւանք կ'ունենայ բողոքս իրերի այն կարգի դէմ, որի շնորհիւ մարդու գնացած կինը պատկանում է իւր մարդուն, որչափ եթէ բողոքէի երկրի ձգողական ոյժի դէմ: Ուրեմն Բ'նչ: Հաշտեմ այդ կարգի հետ: Ի՞նչ օգուտ հաշտում եմ դատարկ, ողորմելի ու անմիտ խօսքից, երբ որ էութեանս մէջ հաշտութեան հիւլէ անդամ չը կայ: Երբեմն սիրտս ասում է գլուխս առնեմ գնամ այսուեղից, բայց շատ լաւ գիտեմ, որ աշխարհքս առանց այդ կնոջ ինձ համար նոյնքան նշանակութիւն ունի որքան մահը, այսինքն այնքան որքան չքութիւնը, և որ աւելի է, առաջուց զիտեմ, որ չեմ գնաւ որովհետեւ մէջս այնքան ոյժ չի գտնուիլ: Յաճախ դրեթէ բողոքովին պարզել է գիտակցութեանս համար, որ մարդկային թշւառութիւնը կարող է աւելի մեծ լինել քան մարդկային գաղափարը նրա մասին և որ կարող է այնպիսի դրութիւն լինել երբ թշւառութեան վերաբերեալ մտածմունքները վերջանում են, իսկ թշւառութիւնը ինքը ծովի նման պիուում է հեռան և հեռան: Այժմ ինձ թւում է թէ նաւում եմ այդ ծովում:

Եւ սակայն՝ ոչ: Կայ մի բան, որ դեռ մնում է ինձ: Մի ժամանակ կարգացել եմ Ամերցի լիշտակարանում, որ գործը՝ թանձրացած ու այդպիսով նիւթեղէն դրութեան հասցրած միոք է: Բայց միոքը կարող է մնալ վերացական դրութեան մէջ, իսկ զգացմունքը՝ ոչ: Տեսականօրէն այդ առաջ էլ զիտէի, սակայն միմիայն այժմ ինձ վրայ ստուգեցի այդ ճշմարտութիւնը: Պլոշով վերաբառնալու ժամանակից մինչև այս բոպէն ոչ մի անդամ պարզ ու որոշ չեմ ասել ինքս ինձ, թէ փափազում եմ զրաւել Անելկայի փոխարձ սէրը, բայց այդ միմիայն խօսքերի հարց է եղել: Խսկապէս զիտէի, որ ուղում էի և ուղում եմ այդ: Խւրաբանչիւր հայեացքս, իւրաքան-

Հիւր խօսքս, բոլոր վարմունքներս միմիայն այդ նպատակին էին ձգտում: Այն զգացմունքը, որ հոմանիշ չէ բաղձանքի ու գործի հետ—ոչինչ է, թող ուրեմն այդ խօսքը արտասանելի—ուղղում եմ ուղում եմ Անելկայի համար դառնալ ամենացանկալի ու ամենասիրելի էակ ինչպէս որ նա է ինձ համար. ուղում եմ տիրանալ նրա սէրին, նրա բոլոր մտածմունքներին, նրա հոգուն, և միտք չունիմ սահման դնել ցանկութիւններիս. ինչ թելաղի սիրտու կ'անեմ և կ'օգտուեմ ամեն տեսակ միջոցներից, որ իմ խելքս ազդու կը համարի, որպէս զի գրաւեմ նրա սէրը: Կրոմիցկու ձեռքից կը խեմ Անելկայի այնքան մասը՝ որքան կը կարողանամ և ամբողջապէս կը խլեմ, եթէ Անելկան ինքը համաձայն լինի: Այդպիսով այսուհետեւ նպատակ կ'ունենամ կեանքում, կ'իմանամ թէ ինչու եմ զարթնում առաւտեան, ինչու եմ ուտում ցերեկով, ինչու եմ կազդուրում քնով: Կատարելապէս բախտաւոր չեմ լինի, որովհետեւ դրա համար հարկաւոր կը լիներ ոչ միայն ամբողջապէս տիրանալ Անելկային, այլ և վրէժ հանել Կրոմիցկուց, որ մի ժամանակ տէր է եղել նրան,—սակայն մի բան կը լինի, որով կարող կը լինեմ ապրել: Խմ փրկութիւնը նրանումն է: Եւ այդ՝ այս բոպէիս կայացրած վճիռ չէ, այլ միմիայն բառացի սահմանումն այն բոլոր ոյժերի, որոնք իրար են զալիս մէջս, այն կամքի ու այն բաղձանքների, որոնք ինձ առօրորոշ զգացմունքի բնութեան մէջ կան ու նրա էութեան անբաժան մասն են կազմում:

Թող ուր ուղում է կորչի նախապաշարւած, մանրակրկիտ խղճմուանքս: Վախս, թէ Անելկան կ'անբախտանայ՝ եթէ ինձ սիրի, պէտք է տեղի տայ այն ճշմարտութեանը,—աշխարհքի չափ մեծ ճշմարտութեանը, որ հէնց միմիայն սիրոյ գոյութիւնը մարդուս սրտում բոլորովին լիացնում է կեանքը, սնունդ է տալիս կեանքին և միլիոնապատիկ աւելի գին ունի քան կենսական դատարկութիւնն ու չքութիւնը:

Սրանից արդէն հազար տարի առաջ յայտնի է եղել աշխարհին, որ բարի ու բարոյական է միմիայն այն, ինչ որ պահպանում՝ զօրացնում է կեանքը, իսկ դատարկութիւնն ու չքութիւնը չարի թագաւորութեան մէջ են գտնում: Այն բոպէին, երբ այդ ազիզ գլուխը դէմ առնի կրծքիս, երբ այդ քաղցրիկ շրթունքները հանգ-

շեն իմ շրթունքների վրայ, —բարի և ճշմարիտ գործ կը կատարւի, Ուղեղս պքողող կասկածների մէջ միմիայն այդ ճշմարտութիւնն է պայծառ փայլում, —միմիայն դրա վերաբերմամբ կարող եմ ասել՝ հաւատում եմ, որ այդպէս է: Վերջապէս կեանքումս մի հաւատի բան գոտայ: Լաւ գիտեմ ինչ ահազին տարբերութիւն կայ այդ իմ հաւատի և այն գրոշանոց պայմանական բարոյագիտութեան մէջ, որ յօրինւած է մարդկանց մեծամասնութեան առօրեայ գործածութեան համար. զիտեմ որ Անելկայի համար էլ այդ օտար ու սարսափելի աշխարհ կը լինի, բայց կը բռնեմ ձեռիցը ու կը տանեմ նրան այդ աշխարհը, որովհնուե կը կարողանամ անկեղծ համոզմունքով ասել նրան՝ այնտեղ է բարին և ճշմարիտը:

Այդ տեսակ մտածմունքները ոյժ են տալիս ինձ: Սակայն օրւայ մեծ մասը ինձ համար վաս անցաւ, որովհետև զգում էի, որ անզօր եմ այն պայմանների առաջ, որնց մէջ գտնւում ենք ևս ու Անելկան: Մաքովս մինչև անդամ այն էլ էր անցնում, թէ գուցէ նս սիրում է Կրոմիցկուն: Բարեբախտաբար կէսօրից յետոյ բժիշկ Խւասառվակին եկաւ և ընդհատեց այդ ենթադրութիւններիս ընթացքը: Նա Պլոշովից եկել էր խորհուրդ անելու զիսաւոր բժշկի հետ, որ առաջ հրաւիրւած է եղել պանի Յելինային ալցելելու, և այժմ Պլոշով վերադառնալուց առաջ եկել էր ինձ տեսութեան: Ասաց, որ պանի Յելինան էլի այնպէս է ինչպէս առաջ, բայց պանի Կրոմիցկայի զլուխը առաւօտանից սաստիկ ցաւելիս է եղել, այնպէս որ նա առաւօտեան թէլին գուրս չի եկել:

Վերջը սկսեց երկար ու բարակ խօսել Անելկայի մասին և ես ուրախութեամբ ականջ էի զնում նրան, որովհետև այդ ինձ համար մասամբ փախարինում էր Անելկայի ներկայութիւնը: Ասենք՝ նա խօսում էր թէպէտ երիտասարդ, բայց խելացի մարդու պէտ Ասաց որ ինքը առհասարակ թերահաւատութնամբ է վերաբեր ում մարդկանց, ոչ այն սլատմառով, որ այդ տեսակէալ միակ իրաւացին է համարում, այլ որովհետև կարծում է թէ այդպիսով մարդ աւելի ավանով կարող է լինել: Բայց զալով սրանի Կրոմիցկային կարծում է, որ կարող է ամենայն վստահութեամբ դասել նրան ամեն տեսակէալից բարձր բնաւորութիւնների շարքը: Անելկայի մասին այնքան ողևորւած էր խօսում, որ մի բոսէ մաքովս անցաւ,

թէ սրտի խորքում դէպի նա հիացմունքից աւելի բան է զգում։  
Այդ ենթաղրութիւնը ինձ ամենեւին ահամութիւն չը պատճառեց, երեկի այն պատճառով, որ գիտէի թէ ինչ ահագին տարածութիւն է բաժանում այդ երէկւան ուսանողին ու Անելկային Ըստհակառակը սրտում շնորհակալ էի նրանից, որ այդպէս լաւ հասկացել է Անելկային ու աւելի երկար պահեցի նրան ինձ մօտ, որովհետեւ բացի այդ նրա հետ խօսելս ինձ չէր թողնում տխուր մտածմունքների մէջ ընկնել։ Խօսակցութեան մէջ հարցրեցի նրանից, ինչ է մտադիր անել ասպագայում։ Պատասխանեց, թէ նախ և առաջ պէտք է մի քիչ փող յետ քցի արտասահման գնալու ու այնտեղի հիւանդանոցներում պարապելու համար, յետոյ կը վերադառնայ ու կը հաստատի Վարշաւայում։

—Ի՞նչ էք հասկանում Վարշաւայում հաստատել ասելով։

—Գիտնական պարապմունք մի որ և է հիւանդանոցում և, եթէ հսարաւոր լինի, մասնաւոր պրակտիկա։

—Երեկի կը պսակւէք էր։

—Դրա ժամանակն էլ կը գայ, բայց ոչ խսկոյն և եթ։

—Այն, ոչ խսկոյն, այլ երբ որ սէր զարթնի սրտներումդ ու գերի դարձնի ձեր կամքը։ Դուք իբրև բժիշկ գիտէք ի հարկէ, որ սէրը Փիզիոլոգիական պահանջ է։

Սակայն, ինչպէս երեւում էր, պան Խւաստովսկին ուզում էր մարդկացին թուլութիւններից բարձր և լուրջ ու կորովամիտ մարդ համարել, ուստի թափ տեց լայն ուսերքը, ձեռքով սղալոց տակնըհանց խուզած մազերը ու ասաց։

—Ընդունում եմ որ պահանջ է, բայց պէտք եղածից աւելի նշանակութիւն չեմ ուզում տալ նրան։ Զը կայ այնպիսի պահանջ, որ անկարելի լինէր զսպել։

Այդ ասելով նա յաղթական կերպով ժպտաց, բայց ես լուրջ պատասխանեցի նրան։

—Եթէ մի քիչ աւելի խորը նայելու լինենք այդ հարցի վրայ, թերեւս գանք այն եղրակացութեան, որ բացի սէրից չը կայ մի ուրիշ բան, որի համար արժէր ապրել։

Խւաստովսկին մի բոպէ միտք արեց։

—Ո՞չ. շատ ուրիշ բաներ կան, այս թէկուղ գիտութիւնը, թէ-

կուզ հասարակական պարտականութիւնները։ Պահելու դէմ խօսք չունեմ, — մարդ պէտք է պատկւի թէ իւր համար, թէ զաւակ ու նենալու համար, — որովհեաւ այդ էլ հասարակական պարտականութիւն է։ Բայց ամուսնութիւնը ուրիշ բան է, անվերջ սիրահարութիւնը՝ ուրիշ։

— Այսինքն ի՞նչ էք ուզում ասել։

— Այն, որ մենք մը ջիւնանոց շինող մը ջիւններ ենք։ Մենք, աշխատաւոր մարդիկս, ժամանակ չունենք կեանքներիս մեծ մասը կանանց ու սիրահարութեան նւիրելու։ Այդ լաւ է այն մարդկանց համար, որոնք կարող են ոչինչ չ'անել կամ որոնք ուրիշ ոչինչ չեն ուզում անել։

Այդ ասելով նա նայեց ինձ վրայ իբրև այնպիսի մարդ, որ խօսում է ազգի ամենակորովի անդամների անունից և խօսում է թէ զօրաւոր կերպով թէ խելացի։ Մի տեսակ զւարճութեամբ էր նայում մարդկային ցեղի այդ առողջ օրինակի վրայ և խոստովանում եմ՝ որ, եթէ չը հաշենք մի քիչ պատանեկական, գրեթէ աշակերտական անձնապատանութիւնը, նրա ասածը բոլորովին ցիմար բան չէր ձիշտ է, որ կինը և սէրը ոչ միայն այս աստիճան ահազին, այլ և սրա կէսի շափ դեր չեն խաղում աշխատաւոր մարդկանց կամ լուրջ ծրագիրներ, լուրջ նպատակներ ունեցող մարդկանց կեանքում։ Գիւղացին պսակում է, որպէս զի կին ունենայ ու տուն ու տեղ դնի։ Խսկապէս նա քիչ է ընդունակ խոր զգացմունքներով զգացւելու, թէև բանաստեղծներն ու վիպասանները հաւատացնում են թէ ընդհակառակն է։ Գիտնականը, պետական մարդը, զօրավարը, քաղաքական գործիչը իրանց կեանքի ամենաշնչին մասն են նւիրում կնոջ։ Միայն արտիստներն են բացառութիւն կազմում։ Ուրիշը նրանց արհեստն է, որովհեաւ եթէ սէրն ու կինը չը լինէին՝ զեղարւեստ էլ չէր լինել։ Խսկ ընդհանրապէս կինը բացարձակ իշխում է միմիայն հարուստների շրջաններում, ուր լիքն են այնպիսի մարդիկ, որոնք փախչում են աշխատանքից։ Նա կատարելապէս լիացնում է ալգապիսիների կեանքը։ Եշխում է նրանց բոլոր մտածմունքներին, դառնում է նրանց բոլոր վարմունքների շարժառիթը, ձգուումների միակ նպատակը։ Եւ այլապէս չի կարող լինել։ Մէկը հէնց ես։ Ինձ շրջապատողները ճիշտ

է շատ էլ հարուստ չեն, բայց ես անձամբ բաւական ունեոր մարդ եմ: Սակայն ինչպէս եմ օգտուել հարստութիւնից, —երբէք ոչ մի բան չեմ արել, այնպէս որ կեանքումն որոշեալ նպատակ ոչ ունեցել եմ, ոչ էլ ունեմ: Գուցէ ազդակս ըլ լինէր եթէ որ Անգլիացի կամ Գերմանացի ծնւած լինէի, բայց ինձ վրայ, բացի այդ, ծանրանում էր այն նախնական մեղքը, որ կոչւում է՝ «improdus estivit slave»: Արդի քաղաքակրթութեան բաղադրիչ գործոններից ոչ մէկը չէր գրաւում ինձ ու չէր լիացնում հոգիս այն հասարակ պատճառով, որ այդ քաղաքակրթութիւնը ուժասպառ ու սիեպտիկականութեամբ տողորւած քաղաքակրթութիւն է, և թթէ նա ինքը զգում է, որ իւր վերջն եկել է, և կասկածով է վերաբերում ինքն իրան, դժւար է պահանջել, որ ես հաւատ զգամ դէպի նա ու կեանքս նւիրեմ նրան: Այդպիսով ընդհանրապէս ապրել եմ իրբեւ օգում անկախ դրութեան մէջ գտնւող մարդ, որովհետեւ չեմ կարողացել կաշել գետնից: Եթէ որ չոր ու ցամաք մարդ լինէի ու գորտի արիւն ունենացի կամ թէ շատ յիմար ու անասնանման զգայասէր լինէի, կը սահմանափակէի կեանքս բուսական գոյութեամբ կամ անասնական պահանջների բաւարարութեամբ և մի կերպ կ'ապրէի, բայց բոլորովին հակառակը եղաւ: Կետս աշխարհք եմ բերել աշխոլժ միտք, անզուսպ բնաւորութիւն և արտակարգ կենսական ոյժեր: Այդ ոյժերը պէտք է մի ելք գտնէին և կարող էին գտնել միմիայն սիրոյ մէջ: Ուրիշ ոչինչ չէր մնում ինձ: Գիտակցում եմ այդ և հպատակւում եմ, որովհետեւ զուր կը լինէր կռւել այդ ոյժի դէմ: Սէր դէսի կինը — ահա իմ կեանքի միակ «raison-d'être»-ը, միակ հիմքը: Իմ անբախտութիւնս ամբողջապէս նրանումն է կայանում, որ իրբեւ հիւանդու քաղաքակրթութեան զաւակ՝ ծուռ եմ մեծացել — իմ զգացած սէրն էլ ի հարկէ չէր կարող ծուռը ըլ լինել:

Գաղափարների պարզութիւնը ինձ բախտաւորութիւն կը տար, բայց չ'արժի դրա մասին խօսել: Խրաքանչիւր կուզ մարդ կը կամենար ազատւել իւր կուզից, բայց չի կարող, որովհետեւ կուզ է եղել արդէն մօր արգանդում: Այդպէս էլ իմ կուզերս յառաջցրել է ինձ աշխարհ բերող դարի ու քաղաքակրթութեան արգանդը: Բայց ծուռ թէ զուզ՝ միւնոյն է, պէտք է սիրեմ և ուզում եմ սիրել:

## 4 մալիսի.

Խելքս բոլորովին ծառայ է դառձել զգացմունքիս և արդէն այն կառապանի դերն է խաղում, որի հոգուը միմիայն այն է թէ կառքը ջարդ ու փշուր չը լինի։ Մի քանի օր է Պլոշովումն եմ և ինչ որ խօսում ու անում եմ՝ բոլորը միմիայն սիրոյ տակաիկա է։ Բժիշկ Խւաստովսկին շատ խելօք բան է արել, որ Անելկային պատշիրել է առողջութեան համար զրօննել պարակզում։ Ես պատահեցի նրան այնտեղ այս առաւօտու ինում են բոպէներ, երբ մարդուս պրտում տարածող սէրը, թէկուզ բոլորովին գիտակցական սէրը, արտայայտում է արտասովոր բուռն կերպով և զբեթէ սարսափ է ազդում իւր սասակութեամբ։ Այդպիսի բոսէ էր այսօր այն բոպէն, երբ որ ծառուզու պտուտանքում տեսայ Անելկային։ Երբէք նա ինձ աւելի գեղեցիկ, աւելի տենչալի, աւելի անկասկած ինձ վիճակւած չէր թւացել։ Դա է որ կայ այն՝ աշխարհիս երեսին մի միակ կինը, որին՝ խորհրդաւոր, գիտնականօրէն զեռ ևս չուսումնասիրւած ոյժերի զօրութեամբ նախասահմանւած է իրան քաշել ինձ այնպէս ինչպէս մագնիսը իրան է քաշում երկաթը, գրաւել ինձ, կապել իրարից, դասնալ ինձ համար միակ նպատակ և բովանդակութիւն տալ կեանքիս։ Նրա ձայնը, նրա կերպարանքը, հայեացքը զմայլեցնում են հոգիս։ Այօր որ մօտեցայ նրան՝ ինձ թւում էր թէ նա իւր մէջ կրում է ոչ միայն իւր սեփական հրապոյրը, այլ և այդ առաւօտւայ, այդ գարնան, այդ պայծառ եղանակի, այն ճնճղուկների ու բոյսերի հրճւանքի հրապոյրը, ուստի և նա ինձ համար կնոջից աւելի բան է, որովհետեւ բացի այդ՝ ամբողջ բնութեան գեղեցկութեան հրապոյրի ու քաղցրութեան մարմնացումն է։ Եւ մածեցի ինձ ու ինձ, թէ եթէ բնութիւնը նրան այնպէս է սաեղծել, որ նա ինձ վրայ աւելի սաստիկ է ներգործում քան որ և է ուրիշ տղամարդու վրայ, կը նշանակի նրան ինձ է նախասահմանել, —և թէ նրա ամուսնութիւնը ոտնակոխ է արել իւմ այդ իրաւոնքը։ Ով գիտի, թերեւս աշխարհիս բոլոր անարդարութիւններն էլ այգպիսի իրաւոնքների զանցաւումից են ծագում և այդ է կեանքի անկատարութեան պատճառը։

Մարդիկ զուր են սէրը՝ աչքերը կապած երեակայում։ Ըսդհակառակը, սիրոյ աչքից չի խուսափում ոչ մի բան, ոչ մի ամե-

Նահնչին մանրամասնութիւն։ Նա իւր սիրած էակի ամեն բանը տեսնում, նկատում է, միայն թէ այդ բոլոր տեսած ու նկատածը իւր կրակով հալում՝ դարձնում է մի մեծ ու պարզ սիրում եմ։

Անելկալին մօտենալիս նկատեցի որ՝ աչքերը քնից նոր վեր կացած մարդու աչքերի նման փայլում են, որ՝ նրա գեմքի ու բաց գոյն շթէ շորի վրայ ընկնում է մատղաշ նշդարիների տերեւների միջով թափանցող ճառագայթների դեղնաւուն—կանաչ շողքը։ բացի այդ նկատեցի որ՝ մազերը անհոգ կերպով են կապած, որ՝ լայն-արձակ բլուզը աննկարագրելի գրաւիչ կերպով է գծագրում նրա գեղեցիկ իրանն ու ուսերքը, որ նրա հագուստի ու սանրւածքի մէջ առաւտուան անհոգութիւն և միենոյն ժամանակը մի տեսակ թարմութիւն կայ, որ հազարապատիկ աւելացնում է նրա հրապուրը։ Ուշադրութիւնից չը խուսափեց և այն, որ՝ այդ բարձր նշդարիների ծառուղիում նրա կերպարանքը (Փիգրա) սովորականից աւելի փոքր է երեսում և այնքան ջանէլ, կարծես երեխացի կերպարանք լինի,—մի խօսքով աչքից ոչինչ չը փախաւ, բայց բոլոր զիտածներս ի մի ձուլեցին ու դարձան գժի պէս սիրող մարդու յափշտակութիւն։

«Բարի լոյս—իս շփոթւած պատասխանեց։ Մի քանի օր է ինչ ինձնից վախենում է, որովհետև իւրաքանչիւր հայեացքովս հիսլ-նոսահար եմ անում նրան։ Միտքը արդէն սկսել է պղտորւել, խմորը թափանցել է հոգին։ Զէր կարող չը նկատել, որ ես սիրում եմ իրան, բայց միենոյն ժամանակը պարզ տեսնում եմ, որ կը մեռնի ու մինչև անգամ ինքն իրան չի խոստովանեիլ, թէ այդպիսի բան է անցնում մաքովը։ Երբեմն-երբեմն այնպիսի տպաւորութիւն եմ կրում, կարծես ձեռումս աղաւնի բռնած լինեմ ու մատներիս տակին զգալիս լինեմ նրա ահարեկւած սրտի անհանգիստ բարախումը։ Առաջ էինք զնում այլայլած ու լուռ և ես դիտմամբ չէի ընդհատում լուռութիւնը։ Գիտեմ որ այդպիսի այլայլութիւնները նրա համար շատ ծանր են, բայց նրան մասսամբ ինձ մեղսակից են դարձնում ու ինձ մօտեցնում են նպատակիս։ Մեր շուրջը տիրող խաղաղութեան մէջ լսում էինք միայն մեր ուսների տակի աւազի խշխոցը ու ամեն ծառ ու թուփի միջից հնչող՝ սարեկների ուրախ շըշշոցը։ Վերջապէս խօսակցութիւն բաց արեցի։ Ինչ ուղղութիւն ու-

զում էի՝ տալիս էի խօսակցութեանը, որովհետեւ թէև միտքս անմատոց էր զգացածիս հետ կազ չունեցող արտաքին ազդեցութիւնների համար, սակայն միւս կողմից սէրիս սահմաններում գրեթէ կրկնապատիկ յուշառ էի ու այնքան սրախոհ, որքան լինում են մագնիսական քուն մոտած մարդիկ, որոնք որոշեալ ուղղութեամբ աւելի պարզ են տեսնում քան կանոնաւոր մարդիկ։ Նատ շուտով անցանք անձնական խնդիրների։ Խմ մասին խօսում էի այն մոտերմական վստահութեան տոնով, որով մարդ առհասարակ խօսում է ամենասրտակից էակի հետ, որը միակ ամբողջ աշխարհում իրաւունք ունի զիտենալ ամեն ինչ։ Այդպիսով մեր մէջ ծագում էր համախոռութեան ու համերաշխութեան մի ամբողջ աշխարհ, որ միմիայն մեր-երկուսին էր պատկանում։ Խսկ քանի որ այդպիսի կազ պէտք է, ամուսնութեան պատճառով, դոյտութիւն ունենար միմիայն նրա ու իւր մարդու մէջ, կը նշանակի դրանով ես նրան աննկատելի մանր քայլերով տանում էի դէպի հոգեկան անհաւատարմութիւն։

Սակայն Անելիկայի նուրբ հոգին բնազդմամբ զգում էր, որ ինչ որ անսովոր ճանապարհով ենք զնում։ Կարծես ձեռիցը բռնած քիչ-քիչ առաջ էի տանում, բայց տանելիս զգում էի մի տեսակ բարոյական զիմաղրութիւն։ Նատ լաւ հասկանում էի և այն, որ հենց որ աւելի ուժեղ ձգէի նրան կամ հենց որ վտանգները զադարէին այդ աստիճան աննշմարելի լինելուց՝ զիմաղրութիւնը իսկոյն կը սաստկանար։ Բայց պարզ տեսնում էի, որ առաւելութիւնն ին կողմն է և ուր ուղեմ՝ կամաց-կամաց կը տանեմ։ Նրան։

Այդ միջոցին ես զիտմամբ խօսում էի անցեալի մասին։

—Յիշում ես, —ասացի, —ինչպէս այն երանելի ժամանակները մի օր հարցնում էիր ինձնից, ինչու հայրենիքում չեմ աղքում ու թողնում եմ զուր կորչեն այն ընդունակութիւնները, որ իմ մէջ տեսնում են մարդիկ։ Գալով ինձ, ես յիշում եմ քո բոլոր խօսքերը։ Այդ այն օրն էր, երբ ես ուշ վերադարձայ քաղաքից, իսկ դու սպասում էիր իմ վերադարձին. .... Ասել չեմ կարող, թէ որ քան մէծ ազդեցութիւն ունէիր զու ինձ վրայ։ Զը կարողացայ իսկոյն մի գործի կողմէ, որովհետեւ պէտք է զնայի այստեղից, իսկ յետով հայրս մեռաւ. .... Բայց քո խօսքերը տղաւորւն էին սըրտում և անկեղծօրէն պէտք է ասեմ քեզ, որ եթէ վերադարձայ,

եթէ մտադիր եւ՛ ընդ միշտ բնակութիւն հաստատել այսուեղ ու մի գործով պարապել, եթէ վերջապէս մի բան անեմ, —քո ազդեցութեամբն է ու քո արժանիքն է համարւելու....

Բաւական ժամանակ լրութիւն էր տիրում մեր մէջ, —լսում էր միայն սարեկների անվերջ շրւշլոցը։ Անելկան, երեսում էր, պատասխան էր փնտուում Վերջապէս նա ասաց.

—Հաւատալու բան չէ, որ քեզ պէս մարդը այն բոլորն անելու ուրիշ՝ աւելի կարեռ շարժառիթ չունենար, Դու ինքդ շատ լաւ գիտես, որ այդ՝ ամեենքիս պարտականութիւնն է, իսկ այն անցած-զնացած բան է, այժմ ամեն ինչ փոխւել է։

—Հմուր փոխւել է՝ համ չի փոխւել —պատասխանեցի ես Գուցէ երբ որ սկսեմ մի գործով պարապել, ժամանակով տաքանամ գործիս վրայ, սիրեմ պարապունքս, բայց ինձ նման մարդը, որ չընայելով քո ասածին, երբէք պարտականութիւն չի զգացել մի որ և է գործով պարապելու, պէտք է որ և է անձնական շարժառիթ ունենայ, որպէսզի հիմնովին փոխի իւր կեանքը.... Եւ ինչքան դառը լինի բախար, այնքան աւելի անհրաժեշտ է նրան ազգպիսի անձնական շարժառիթ.... Խեժն պէտք է քո առաջ ստեմ.... Ես ամենեւին բախտաւոր չեմ.... Հասարակական պարտականութիւններ զգացման շատ բան է, դժբախտաբար ես զուրկ եմ այդ զգացմունքից, Դու, որ ինձնից հազար անգամ բարձր ու ազնիւ ես, կարող էիր ինձ սովորեցնել այդ պարտականութիւնները զգալ.... բայց բանը ուրիշ կերպ զնաց.... Սակայն հենց այժմ էլ, եթէ մի որ և է գործ կատարելու լինիմ, այդ միմիայն քո շնորհիւ է լինելու, միմիայն այն բանի շնորհիւ է լինելու, որ լիշում եմ, թէ դու մի ժամանակ ինձնից զործ էիր պահանջում։

Անելկան քայլերն արագացրեց, կարծես ուզում էր իսկոցն յետ դառնալ տուն, և պատասխանեց ինձ գրէթէ շըշնջալով.

—Այդպէս մի խօսիլ, Լեն, խնդրում եմ, այդպէս մի խօսիլ: Դու ինքդ պէտք է լաւ իմանաս, որ այդպիսի դիտումներ ես ընդունել չեմ կարող:

—Խեժն չես կարող: Ասածս սխալ ես հասկանում: Դու ինձ համար ամենասիրելի քոյր ես ու քոյր էլ կը մնաս միշտ: Ասածս միայն այդ էր:

Անելիան գրեթէ տեղային կերպով մեեկնեց ինձ ձեռքը, որ ես կամաց ու ամենախորին ակնածութեամբ մօտեցրի շրթունքներիս:

—Հա, կը մնամ, միշտ կը մնամ,—շտապով պատասխանեց նաև Տեսայ, որ հենց իմանաս մի ահադին քար զլորւեց կրծքի վրայիցը, —այն աստիճան հանգստացրեց, գրաւեց սիրտը ու յուղեց մի քըյր՝ խօսքը: Դրա շնորհիւ ինձ էլ յաջողւեց խելքս գլուխս հաւաքել, թէ չէ առաջին բոպէին, երբ շրթունքներս կտան նրա քաղցր ձեռքին, աչքերս համարեա շաղւեցին և սիրտս ասում էր զրկէի նրան, սեղմէի կրծքիս ու ինչ կայ-չըկայ՝ ճիշդը յայտնէի:

Մինչ այդ՝ Անելիայի գէմքը պարզւեց ու զւարթացաւ: Քանի մօտենում էինք տանը, նրա անհանգստութիւնը անցնում էր, իսկ ես տեսնելով որ այդպիսով նրա սիրտը սասատիկ գրաւում եմ, շարունակեցի հանդարաս ու սովորական խօսակցութեան տոնով.

—Զը զիտես, քոյրիկս. իմ շուրջը ամայութիւն է տիրում: Հայրըս կենդանի չէ, հօրաքոյրս սուրբ կին է, բայց մենք դժւար կարող ենք իրար հասկանալ, որովհետեւ նա ոչ նոր ժամանակի ողին է հասկանում, ոչ նոր մարդկանց: Նրա գաղափարները բոլորովին տարբեր են իմ գաղափարներից: Ես երբէք չեմ սկակւելու, մոածիր՝ տես, որքան միայնակ եմ ես: Չորս կազմս ոչ ոք չը կայ: Ոչ ոք, որին կարողանայի հաղորդել մտքերս, զիտաւորութիւններս, որին պատմէի դարդերս.... Ամայի անապատ ու գատարկութիւնն... Այժմ ինքդ ասա, ի՞նչ զարմանալու բան կայ, որ համակրութիւն եմ փնտուում այնտեղ, ուր կարող եմ դտնել.... Անդամալոյծ աղքատի նման մի բան եմ, որ դուան մօտ կանգնած սպասում է, թէ դուցէ մէկը զուրս գայ ու մի սե գրօշ տայ իրան: Այժմ այդ աղքատը, այդ ողորմեելի աղքատը կանգնած է քո պատուհանի տակ և աղաչում, խնդրում է քեզնից մի փոքր բարեացակամութիւն, մըտերմութիւն ու գութ: Նրա մոքումը բացի ողորմութիւնից ոչինչ չը կայ և դու ի հարկէ չես մերժիլ նրա խնդիրքը, ճանապարհ չես դնիլ առանց ողորմութեան, չի:

—Ոչ, չեմ մերժիլ, Լէօն, —պատասխանեց Անելիան, —չեմ մերժիլ. մանաւանդ որ, եթէ այդքան դառն է դրութիւնդ...

Այդ խօսքի վրայ ձայնը խեղդմեց բգումը ու շրթունքները սկսեցին զողալ, Դարձեալ պէտք է բոլոր ոյժերս լարեի, որպէսզի սկսէի ինձ ու չընկնէի նրա ոտները, Նրան նայելով այն աստիճան յուզւեցի, որ իմ բուգս էլ սկսեց խեղդմել կարծես արտասուքից:

— Անելկա, Անելկա, — բացազանչեցի ես, չ'իմանալով ինչ ասէի նրան:

Բայց նա սկսեց ձեռքերը թափ տալ, կարծես ուզում էր ինձ հեռացնել իրանից ու յետոյ լացակրկնած ասաց.

— Այս բոպէիս, այս բոպէիս.... կը հանգստանամ: Զեմ կարող այսպէս նեքսև գնալ.... թող երթամ....

Ու արագ-արագ հեռացաւ:

— Ներիր ինձ, Անելկա, — ձայն տւեցի յետեւից:

Սկիզբն ուզեցի վազել՝ յետեւիցն հասնել բայց յետոյ մնածեցի՝ տեսայ, որ պէտք է նրան մենակ թողնել, ու միայն հայեցքովս հետևեցի նրան: Նա շտապ-շտապ յետ դարձաւ այն ծառուղին, ուր մենք առաջ զրօսնում էինք, յետոյ ծռեց ճանապարհու

Երբեմն թաւուտը ծածկում էր նրան, երբեմն նրա բացգոյն հազուսաը նորից երևում էր ծառերի արանքում՝ արևի առաջին վառ փայլերով: Հեռւից տեսնում էի, ինչպէս անդադար բաց ու խուփ էր անում հովանոցը, ակներեւաբար ցանկանալով այդ ֆիզիկական զրազմունքով փարատել սրտի յուզմունքը: Այդ ժամանակ ես նրա զլիսին թափում էի հազար ու մի քաղցր խօսքեր, — խօսքեր, որ թերագրում էր ինձ սէրը: Զը կարողացաչ յաղթել ինձ ու հեռանալ, մինչև որ մէկ էլ չը տեսայ նրա երեսը, սակայն զրահամար ստիպւած եղայ երկար սպասել, Վերջապէս վերադարձաւ, բայց իմ կողքովը շատ արագ-արագ անցաւ, կարծես վախենալով, որ նորից յուզւի միայն՝ անցնելիս նայեց ինձ ու հրեշտակային մոերմութեամբ ու քաղցրութեամբ ժպտալով ասաց.

— Այժմ լաւ եմ, լաւ եմ:

Արդարեւ՝ արագ ման գալուց կարմրած երեսին արտասուք չէր երևում:

Մենակ մնացի և յանկարծ խենթի ուրախութիւն եկաւ վրաս, սիրոս լցւեց յոյսով, գլխումս միայն մի միտք էր մնացել, — նա

ինձ սիրում է.—պաշտպանուում է, դիմադրում է ինքն իրան խառում է, բայց սիրում է Նըրեմ բոլորովին խելքը զլխին մարդն էլ բուռն զգացմունքի ներքոյ գրեթէ խելագարութեան սահմանումն է լինում; իսկ ես այնքան մօտ էի այդ սահմանին, որ քիչ էր մնում վազ տայի պարտէզի խորքը, թաւալէի խոտի վրայ ու բարձրաձայն աղաղակէի, թէ նա ինձ սիրում է:

Այժմ որ հանգիստ սրաով միտք եմ անում այդ ուրախութեանս վրայ, տեսնում եմ, որ նա՝ Ասուած միայն գիտէ թէ որքան տարրերից է բաղկացած: Ի միջի ալլոց կար և հրձւանք արեստագէտի, որ զգում է թէ իւր գլուխ-գործոցը զլուխ է գալիս, կար թերես և զւարձութիւն սարդի, որ հաւատացած է, թէ ճանճը կ'ընկնի իւր ոստայնը, բայց կար և՛ բարեհոգութիւն և՛ գութ և՛ գորով և՛ այն ամենը, որ տեսնելով, ինչպէս ասում է բանաստեղծը, հրեշտակները երկնքում ուրախանում են: Խեղճս գալիս էր, որ այդ անգէն խեղճ կինը պէտք է լինկնէր իմ ձեռքս ու միենոյն ժամանակը այդ իզմալս աւելի սաստկացնում էր սէրս և հետեւարար Անելիկային տիրապետելու ցանկութիւնս. միաժամանակ թէ խղճահալւում էի, որ նրան խարում եմ և թէ զգում էի, որ կեանքումն երբէք այդ աստիճան անկեղծ ու սրտիս խորքից չեմ խօսացել:

Ես հօ նրան չէի խարում, որ համակրութիւնն ու մտերմութիւնն էի խնդրում: Այդ էլ ինձ առողջութեան պէս անհրաժեշտ է: Միայն թէ բոլոր ցանկութիւններս չը յայտնեցի, որովհետեղ դեռ զրա ժամանակը չի եկել. ճշմարտութիւնը ամբողջովին չը յայտնեցի որպէսզի չը սարսափեցնէի այդ քաղցր, բայց վախկոտ սիրուը ննչ և իցէ զիմում եմ դէպի իմ ու նրա երջանկութիւնը այն ճանապարհով, որ ամենաուղիղ կերպով է տանում. հասցնում այդ երջանկութեանը:

## 10 մալիս.

Դրսել արե-արքայութիւն է, արե-արքայութիւն է և իմ ու Անելիկայի մէջ: Անելիկան հանգիստ է և երջանիկ: Խորին կերպով հաւատացել է իմ այն խօսքերին, թէ իմ զգացածս միայն եղբայրական սէր է, և քանի որ խիղճը թոյլ է տալիս նրան սիրել

ինձ իրբեւ քոյլը, սրտին ազատութիւն է տւել: Ես գիտեմ, որ այդ միմիայն՝ ինքն իրան ու մարդուն խարելու ազնիւ ձեւ է, որովհետեւ այդ քրոջ սիրոյ դիմակի տակ թագնած է ու աճում է բոլորովին ուրիշ զգացմունք. բայց ի հարկէ ես նրա աչքը բաց չեմ անիլ՝ մինչև որ այդ զգացմունքը անդիմաղբելի չը դառնայ... Նուտով նրա սիրտը կը բորբոքւի սիրոյ բոցով, որ չեն կարողանալ հանգցնել ոչ կամքի ոչքը, ոչ պարտականութեան զգացմունքը, ոչ էլ այդ աղաւնանման մաքուր կնոջ ամօթիսածութիւնը: Իսկ մինչ այդ՝ ես էլ ինձ լաւ եմ զգում, այնքան լաւ, որ երբեմն ինձ թւում է, թէ կարող եմ էլ ոչինչ փափագ չունենալ՝ միայն այն պայմանով, որ ոչ ոչ մի իրաւունք չ'ունենայ նրա վրայ: Դվիսիս սկի չե՛ հեռանում այն միտքը, թէ քանի որ ես ամենքից աւելի եմ սիրում նրան, կը նշանակի իմ իրաւունքս նրա վրայ՝ բոլորի իրաւունքից բարձր է: Դրանից էլ աւելի տրամաբանական ու արդարացի ինչ կարող է լինել: Զէ որ բոլոր ազգերի ու բոլոր կրօնների բարոյագիտութեան մէջ այր ու կնոջ փոխադարձ պատկանումը հիմնում է սիրոյ զգացմունքի վրայ:

Բայց այսօր ես այնքան անդորր ու երջանիկ եմ; որ ուզում եմ միայն զգալ, չեմ ուզում խորհրդածել: Այժմ մեր մէջ վերին աստիճանի սրտագին, ազատ ու մտերիմ յարաբերութիւն է հաստատել: Սակայն ինչ աստիճան մենք իրար համար ենք ատեղծւած եղել, ինչպէս մեր էութիւնները ձգտում են մէկը գէպի միւսը, ինչպէս խեղձը տաքանում ու հրճում է եղբայրական զգացմունքների այդ հրապուրիչ ջերմութեան մէջ: Ինչ արտասահմանից վերադարձել եմ՝ երբեք նրան այսքան ուրախ չեմ տեսել: Առաջ նրան նայելիս յաճախ մտաբերում էի Նեքսպիրի «Poor Tom»-ին<sup>1)</sup>: Անելկայի բնաւորութիւնը այնպիսի բնաւորութիւն է, որի համար սէրը այնքան անհրաժեշտ է որքան օդը մարդուս համար, իսկ սպեկուլացիաներով գրաւուած կրոմիցկին այնքան չի սիրում նրան, որքան պէտք է, և ընդունակ էլ չէ սիրելու: Անելկան իրաւամբ կարող էր գանգատել ու կրկնել Նեքսպիրի խօսքերը՝ ևսեղճիկ Ցոյը մրտում է»: Այդ որ մտքովս անցնում է չեմ կարո-

1) «Արքակ Լիր» գրամակից:

դանում զսպել խանդաղատանքս և սրտումն խոստանում եմ նրան, որ քանի ես կենդանի եմ՝ նա ցուրտ չի զգալ:

Եթէ որ մեր սէրը վաստ բան լինէր, մեր սիրուլ այսքան հանդիսաւ չէր լինիլ: Իսկ թէ Անելկան դեռ ինքն իրան չի ասել՝ թէ սիրում է, այդ ոչինչ նշանակութիւն չունի, այնուամենացնիւ այդ զգացմունքը կաչ նրա սրտումը: Այսօրւայ ամբողջ օրը մեզ համար իդիլիայի պէս անցաւ: Մինչեւ այժմ կիրակի օրերը չէի սիրում, բայց հիմա տեսնում եմ, որ կիրակին առաւօտից մինչեւ երեկոյ կարող է մի անընդհատ պօէմա լինել՝ մանաւանդ գիւղում: Թէլից յետոյ իսկոյն գնացինք եկեղեցի՝ թիւ պատարագի: Հօրաքոյրս էլ հետներս եկաւ. մեզ հեռ էր մինչեւ անդամ և պանի Յելինան, որ օգուելով հրաշալի եղանակից՝ պատուիրեց, որ իրան բազկաթուով տանեն եկեղեցի: Փողովուրդ քիչ կար, որովհետեւ ժամանո՞ները աւելի հաւաքւում են ձայնաւոր պատարագի ժամանակ: Նստարանի վրայ Անելկայի կողքին նստած ժամանակս ինձ թւում էր, թէ իմ նշանածիս կողքին եմ նստած, և ես ինձ երջանիկ էի զգու՞ս: Երբեմն-երբեմն նայում էի նրա քաղցր, անզին երեսին, նայում էի ձեռներին, որ դրել էր առաջի նստարանի վրայ, և այն կետրոնացումը, որ երեսում էր նրա գէմքից ու բանած դիրքից, ակամայ ինձ էլ էր հազորդուում: Կրքերս լոեցին, խորհուրդներս հաքրեցին և այդ բուգէին ես նրան սիրում էի կստարելապէս իդէալական սիրով, որովհետեւ զգում էի այնպէս՝ ինչպէս երբէք չէի զգացել որ միանգամայն տարրերուում է այն բոլոր կանանցից, որոնց մինչեւ այդ ժամանակ պատահել էի, որ նա նրանցից հաղար անդամ լաւ է ու մաքուր:

Վազուց չէի զգացել այնպիսի տպաւորութիւններ ինչպէս այդ գիւղական եկեղեցում: Դրա պատճառը շատ բարդ էր, — այստեղ նշանակութիւն ունէր և՝ Անելկայի ներկայութիւնը, և՝ եկեղեցական հանդիսաւորութիւնը, և՝ ճրագների մեզմ փայլվլոցը սեղանի մթութեան մէջ, և՝ պատուհաններից ներս թափանցող լոյսի գոյնզգոյն շերաերը, և՝ ճնճղուկների ճռւողիւնը, և՝ խաղաղ ժամասացութիւնը: Այդ բոլորի մէջ զեռ կար մի տեսակ առաւօտեան քնաթաթախութիւն և բացի դրանից՝ այդ բոլորը քաղցր զրութիւն էր բերում մարդու վրայ: Սրախս խորհուրդները սկսեցին այնպիսի խա-

ղաղ ու հանգիստ ընթացք ստանալ ինչպէս սեղանի առջևի բուր-  
վառների ծուխը։ Սրտումն զարթնեց անձնազոհութեան ցանկու-  
թեան նման մի բան և ներքին ձախը սկսեց ինձ ասել։ «Մի պատ-  
րիլ այդ պարզ ջուրը, յարգիր նրա իստակութիւնը»։

Մինչ այդ՝ պատարազը վերջացաւ և մենք դուրս եկանք եկե-  
ղեցուց։ Ժամի դռանը ես զարմացմամբ տեսայ, որ Լատիշ ծերուկն  
ու պառաւը գետնին նստած ու փայտէ։ Թասերը բռնած ողորմու-  
թիւն են ինդրում։ Հօրաքոյրս գիտէր, որ ես նրանց փող եմ տեհլ  
և սաստիկ բարկացաւ ու սկսեց նրանց նախատել, բայց պառաւը,  
թասը դէպի մեզ մեկնած պահելով, հանգիստ սկստախանեց։

— Աղան ուզում էր, որ մենք տուն ու տեղ ունենանք, Աստ-  
ած իրան իրա սրտովը տայ, համա Աստծու կամքին հակառակ  
չը պէտք է գնալ։ Աստած որ հրամայել է, որ մենք այստեղ նըս-  
տենք, մենք պէտք է նստենք ու կը մնանք այստեղ յաւիտեանս  
յաւիտենից, ամէն։

Այդպէս մտածողի հետ վիճել չէր կարելի։ Եւ մանաւանդ այդ  
յաւիտեանս յաւիտենից ամէնց-ը ինձ վրայ այն աստիճան ազդեց,  
որ ողորմութիւն տւեցի հէնց միայն այդ հայեացքի բնուրոյնու-  
թեան համար։ Հասարակ ժողովուրդը իսկապէս հաւասում է նա-  
խասահմանութեանը։ Նա կուրօրէն հոդատակում է նակատագրին,  
միայն թէ նակատագրի գաղափարը իւր հասկացողութեամբ քրիս-  
տոնէացնում է։ Այդ լոտիշները ինձնից հազար երկու հարիւր բուրլի  
են ստացել ու այժմ աւելի հարուստ են քան երբ և իցէ եղել են,  
և սակայն ժամի դրան նստած ողորմութիւն են ինդրում, համոզ-  
ւած լինելով, որ այդպէս է որոշել նակատագիրը, որին պառաւը  
Աստծու կամք անունն է տալիս։

Վերադառնում էինք տուն։ Մեծ-պատարազի զանգերը տալիս  
էին, Տղամարդկանց ու կանանց ահազին բազմութիւն էր գնում  
ճանապարհով։ Կեռաւոր ագարակների գիւղացիք գալիս էին ար-  
տերի միջով, որոնք ծածկւած էին թէեւ դեռ ևս կանաչ, բայց բա-  
ւական բարձրացած հասկերով։ Ինչքան տեղ մարդու աչք կարում  
էր, օգեղէն պարզ տարածութեան մէջ երևում էին գիւղացի աղ-  
ջկերանց վառգագոյն գլխաշորերը, որոնք կանաչում բուսած խաշ-  
խաշի գոյնզգոյն ծաղիկների նմանութիւն էին տալիս։ Ի միջի ալլոց

ասած՝ ամբողջ նւրոպայում ոչ մի տեղ չը կան այնպիսի ընդարձակ օղեղէն տարածութիւններ, ինչպէս մեզնում: Բացի դրանից իմ ուշադրութիւնը առանձնապէս գրաւեց և այն խիստ աչքի ընկնող տօնալին բնաւորութիւնը, որ երեսում էր թէ մարդկանց վրայ, թէ արտաքին բնութեան մէջ: Ճիշտ է՝ հրաշալի եղանակ էր, բայց թւում էր, թէ քամին չի փչում նրա համար, որ կիրակի է, արտերը չեն ալէծփում և բարդինների տերեւները չեն երերում նրա համար, որ կիրակի է, որ կողմը նայում էիր՝ տեսնում էիր ուրախ ու գւարժ անդորրութիւն, խաղաղութիւն, տօնօրեաչ հագուստներ ու անչափ լոյս:

Անելիկին բացատրեցի գեղարւեատի տեսակէտից թի ամբողջ տեսարանի և թէ օդի կապուտակ երանգով դաշնակաւորւած այդ գոյնզգոյն բծերի գեղեցկութիւնները: Յետոյ սկսեցինք խօսել գիւղացոց մասին: Պէտք է խոստովանւեմ, որ ես նրանց վրայ նայում էի իրրե բազմաթիւ աւել կամ պակաս գեղարւեատական մողէլների հաւաքածուի վրայ: Բայց Անելիկան բոլորովին այլապէս էր վերաբերում նրանց: Նա շատ ուրախ ու տիրալի բնորոշ բաներ պատմեց նրանց մասին, խօսելուց և ման գալուց սաստիկ գւարթացաւ ու այն աստիճան գրաւիչ էր այդ միջոցին, որ ակամայ սկսեցի, նրա վրայ նայելով, կրկնել վերջին չորս տողերը համալսարանում եղած ժամանակս գրած պումազիս, որի մնացեալ մասը բոլորովին մոռացել եմ.

Զարմանում եմ, մանուկ չքնաղ ու սիրուն,  
Դու իմ դրախտ ու զարուն,  
Որ չեն բսնում քո քնքուշիկ ոստի տակ  
Վարդ ու շուշան անուշակ<sup>1)</sup>

Խօսքը դարձեալ անցաւ Լատիշների կամ աւելի ճիշտ՝ պառաւ Լատիշուհու վրայ, որի գատողութիւնների վրայ վերջը բաւական ծիծաղեցինք: Լս սկսեցի պառաւի խօսքերը ինձ սազացնել: Հորաքոյը մեզնից մի քանի քայլ յետ էր ընկել ու գալիս էր պանի

1) Ալդ ոտանաւորը ար. Ա. Շատուրեանն է թարգմանել:

Ցելինայի հետ, որին ծառան բազկաթոռով բերում էր յետեից, այնպէս որ ազատ կարող էի խօսել մեր վերջին զբանաքի մասին: —Աերջերքս, ասացի, ես քեզնից ողորմութիւն խնդրեցի ու դու ինձ տեղիր: Այժմ տեսնում եմ, որ այդ ինձ ամենելին չի պարտաւորեցնում և ես կարող եմ գնալ՝ ժամի դռանը մուրացկանութիւն անել:

—Ոհօ, պատասխանեց Անելիկան, և ուրիշ՝ ողորմած սիրա ունեցողից նոյն բանը խնդրել: Հօրաքոյրն ուզում է այդպիսի մի հոգմորի վաղը Պլոշով հրաւիրել, հասկանում եմ, հասկանում:

Ես ի պատասխան ասացի, որ օրիորդ Նիլառը շատ մեծ է, այնպէս որ մի սիրո նրան տեղ չի անիլ և պէտք է ամենաքիշը երեք հոգի միասին նրա վրայ սիրահարւեն, բայց Անելիկան էլի իւր ասածը շարունակում էր և մատը վրաս թափ տալով կրկնում էր.

—Այդտեղ մի բան կայ, ես կասկածում եմ:

—Այս անգամ բոլորովին անհիմն կերպով, պատասխանեցի ես, որովհետեւ իմ սիրոը միմիայն եղբայրական զգացմունքների պահեստ է և նրա մէջ բացարձակ տիրապետում է այն չարասիրտ էակը, որ այժմ ինձ տանջում է:

Անելիկան դադարեց մատը թափ տալուց և ծիծաղելուց, բայց ոտը կախ զցեց, այնպէս որ մի քանի րոպէ անցած մերոնք հաւասարեցին մեզ: Սակայն այնուհետեւ էլ իրար հետ շատ լաւ էինք և ամբողջ օրը այնքան ուրախ անցկացրինք, որ յաճախ ինձ թւում էր, թէ ես դեռ գիմնազիստ եմ: Իրաւ է՝ աչքերովս ասում էի նրան, որ նրան սիրում եմ, բայց ցանկութիւնը լրել էր իմ մէջ: Այսօր նա այնքան թանկ էր իմ սրտի հսմար, որ չէի կարող ցանկանալու աչքով նայել նրան: Հօրաքոյրս նախաճաշից յետոյ իսկոյն գնաց Վարշաւաւ. ես օրւայ մնացած մասը պանի Ցելինայի մօտ նստած բարձր ձայնով կարդում էի նրա համար Մոնտալամբերի նամակները, որի հետ հայրս մի ժամանակ նամակազրութիւն է ունեցել: Այդ նամակները ինձ սաստիկ կը ձանձրացնէին, եթէ որ Անելիկան էլ մեզ հետ միասին չը լինէր: Գրքիցը աչքերս բարձրացնելով հանդիպում էի նրա հայեացքին, որ սիրոս լցնում էր ուրախութեամբ, որովհետեւ կամ ես խելքս բոլորովին կորցրել եմ կամ թէ չէ նա նայում էր ինձ այնպէս, ինչպէս կարող է նայել անմեղ ու

Ժաքուր, բայց անդիտակցարար ի բոլոր սրտէ սիրող կինը: Խնչ քաղցր օր էր այսօր: Հօրաքոյլը երեկոյեան վերադարձաւ ու յայտնեց, որ վաղը հիւր կը գտն Մնեատինսկիներն ու Կլարան:

Արդէն շատ ուշ է, բայց չեմ ուզում քնել, որովհետեւ ափսոս զալիս է բաժանւել այսօրւաց տպաւորութիւններից: Երազը նրանցից քաղցր չի կարող լինել: Բացի այդ՝ սպարտէզը թնդում է սոխակների գեղգեղանքներից, իսկ իմ մէջ դեռ կենդանի է հին առմանտիկը: Յերեկին յաջորդեց նոյնքան հրաշալի գիշեր: Երկինքը լիքն է ասաղերով: Մտածում էի Անելկալի մասին ու մտքումս նրան «բարի գիշեր» էի ասում: Այդ խօսքերը ես մի հարիւր անգամ կրկնեցի: Խնչակս տեսնում եմ, իմ մէջ բացի «improductivité slave»-ից՝ մի տեսակ բացառադիմս լեհական սենտիմենտալիզմ էլ կայ: Այդ կողմից մինչեւ այժմ ինքս ինձ չէի ճանաչում: Սակայն այդ ինչ վնաս ունի՝ որ... Շատ-շատ եմ սիրում Անելկալին:

(Կը շարունակուի)